Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԿՈՏՈԼՅԱՆԻ ԵՎ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՓՈՐՁԱԳԵՏ ԼԻԱՆՆԱ ԱՆԱՆՅԱՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28-ԻՑ ՆՈՅԵՄԲԵՐԻ 2-Ը ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՖՈՒՋԵՅՐԱ ՔԱՂԱՔ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Կոտոյյան Արմեն-Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի (այսուհետ՝ ՇՎՏՄ) ղեկավար,

Լիաննա Անանյան – ՇՎՏՄ-ի փորձագետ:

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Արաբական Միացյալ Էմիրություններ, Ֆուջեյրա քաղաք, 2024թ. հոկտեմբերի 28-ից մինչև ս.թ.նոյեմբերի 2-ը ներառյալ:

3.Հրավիրող կողմը.

Ֆուջեյրայի քաղաքապետարան, Ֆուջեյրա քաղաքի քաղաքապետարանի գլխավոր տնօրեն՝ Մուհամեդ Սայֆ Ալաֆհամի հրավերով:

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Գործուղման նպատակն էր ծանոթանալ Ֆուջեյրայի Շուկայի տեսչության վերահսկողության ընթացակարգերին, գործառույթներին՝ հետագա համագործակցության եղանակներ ստեղծելու համար:

Ինչպես նաև՝ մասնակցել 2024 թվականի հոկտեմբերի 29-31-ը Նորին Մեծություն Շեյխ Համադ բին Մոհամմեդ Ալ Շարկիի՝ Բարձրագույն խորհրդի անդամի և Ֆուջեյրայի Էմիրության կառավարիչի հովանավորությամբ կայանալիք 9-րդ Ֆուջեյրայի Միջազգային Հանքարդյունաբերական Ֆորում Ցուցահանդեսին:

5. Քննարկված թեմաները.

Ֆուջեյրայի քաղաքապետարանում քննարկված թեմաներն էին՝

- Ֆուջեյրայի քաղաքապետարանի (այսուհետ՝ քաղաքապետարան) հիմնական գործառույթները:

Քաղաքապետարանի կառուցվածքային ստորաբաժանումների՝ այդ թվում ստուգումների և բողոքների ընթացակարգերի ներկայացում: Շուկայի վերահսկողության տեսչությունը գործում է Ֆուջեյրայի քաղաքապետարանի ենթակայության ներքո:

- Սպառողների պաշտպանություն ու առևտի վերահսկողություն:
- Շուկայի վերահսկողության տեսչության իրականացման համար կիրառվող Արաբական Միացյալ Էմիրությունների (այսուհետ՝ ԱՄԷ) հիմնական օրենքները:
- Ստուգուների տեսակները ու խնդիրները:
- Ծանոթացում ոչ պարենային ապրանքների ստուգումների ոլորտներին:
- Ստուգման ընթացքում նմուշների փորձարկման գործընթացը:
- Այց լաբորատորիաներ:

9-րդ Ֆուջեյրայի Միջազգային Հանքարդյունաբերական Ֆորում Ցուցահանդեսի հիմնական թեմաներն էին՝

- Արդյունաբերության զարգացման ուղիները, էներգետիկ վերափոխումները, կիբեր անվտանգությունը, արհեստական բանականության կիրառման հնարավորությունները:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

ՇՎՏՄ-ի ներկայացուցիչները, ս.թ.-ի հոկտեմբերի 29-ին մասնակցել են Ֆուջեյրայի քաղաքապետարանում կայացած հատուկ հանդիպում-քննարկմանը, որտեղ ներկա էին վարչության տարբեր ղեկավարներ:

Նախքան հանդիպման մեկնարկը, ՇՎՏՄ-ի ղեկավար Արմեն Կոտոյանը ողջունեց ներկաներին, որից հետո սահիկաշարի տեսքով համառոտ ներայացվեց ՇՎՏՄ-ի գործառույթները, ոլորտները, նպատակները, խնդիրները:

Իրականացվեցին նաև այցեր լաբորատորիաներ: Փոխադարձ հնչեցին տարբեր հարցեր երկու երկրների շուկայի վերահսկողության իրականացման գործընթացների վերաբերյալ:

7.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Ձեռք է բերվել պայմանավորվածություն հետագա համագործակցության, Ֆուջեյրայի շուկայի վերահսկողության տեսչության հետ կապերի ամրապնդման, ինչպես նաև՝ հետագա փոխադարձ շարունակական այցեր իրականացնելու վերաբերյալ: Կողմերն ընդգծեցին միջազգային համագործակցության կարևորությունը վարչական համակարգերի զարգացման և ստուգումների արդյունավետության բարձրացման գործում, ինչը նպաստում է կայուն զարգացմանը և մատուցվող ծառայությունների բարելավմանը:

8.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկ եղավ հետագայում կնքել համագործակցության հուշագիր ՇՎՏՄ-ի և Ֆուջեյրա քաղաքի համապատասխան մարմնի միջև, ինչպես նաև՝ բանավոր քննարկվեց Ֆուջեյրա քաղաքի և ՀՀ քաղաքներից մեկի հետ քույր-քաղաք ճանաչելու վերաբերյալ հարցը: Ձեռք բերված պայմանավորվածությունների ընթացքը կհամակարգվի ՇՎՏՄ-ի կողմից:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

Восстановимая подпись

X

ԱՐԹՈՒՐ ՄԿՐՏՉՅԱՆ

05.11.2024թ. Подписано: KOTOLYAN ARMEN 3810870129